ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՄԱՆՏ ԱՐԱՊՅԱՆԻՆ «Մ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԱՆՏ ԱՐԱՊԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ:

Ցարգարժան պրն Արապեան,

Գոհութիւն եւ փառք ենք բարձրացնում առ Աստուած, որ մեր ժողովրդի զաւակները, հաւատարիմ ազգային եւ քրիստոնէական մեր արժէքներին, հայ մարդու ստեղծագործ ու աբարող նկարագրին, իրենց ազնիւ ներդրումն են բերում աշխարհի տարբեր երկրների հասարակական կեանքին: Ձեր անունն էլ ծանօթ է ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում՝ իբրեւ բարձրաստիճան դատաւորի, ով իր յաջողուած գործունէութեամբ պատիւ է յաւելում մեր ժողովրդին:

Այսօր առիթն ունենք անդրադառնալու Ձեր ջանքերին ու մասնակցութեանը հայրենական մեր կեանքին: Ձեր ազնիւ հովանաւորութեամբ շուտով պիտի իրականացուի Սուրբ Գայանէ վանքի վերանորոգութիւնը, որպէսզի այն բարեկարգ տեսքով լիարժէքօրէն ծառայի մեր ժողովրդի զաւակների հոգեւոր կարիքներին եւ, իբրեւ հնագոյն ու նշանաւոր սրբավայր, շարունակի աստուածային օրհնութիւն սփռել նուիրական մեր հողին: Մայր Հայրենիքում հոգեւոր վերազարթոնքի այս շրջանում բազմադարեայ վանքերի պահպանութիւնն ու վերանորոգութիւնը առաջնային մտահոգութեան ու հոգածութեան առարկայ են Մեզ համար, եւ իւրաքանչիւր նման ջանք կամ աշխատանք այս ուղղութեամբ մեծապէս մխիթարում է Մեզ:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նկատմամբ դրսևորած Ձեր նախանձախնդրութիւնը եւ Սուրբ Գայանէ վանքի վերանորոգութեանը բերած Ձեր աջակցութիւնը, Հայրապետական Մեր այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամն Աստուած հաւատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, գործոց յարաւորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Յուլիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 176